Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-430[1]-20.01.2014-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ օրենք) 13-րդ հոդվածի 1-ին կետում «բնության պահպանության,» բառերից հետո լրացնել «մշակույթի,» բառը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Արգելվում է վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան, գիշերային ակումբի, ծխախոտի, ինչպես նաև սույն օրենքով հեռուսատեսությամբ գովազդի համար արգելված ապրանքների և ծառայությունների, որպես հովանավորներ հիշատակումը Հանրային հեռուստատեսությամբ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4
Աժ պատգամավոր Ռուզաննա Մուրադյան	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 26-րդ հոդվածում նոր առաջարկվող 6.1-րդ մասից հետո լրացնել 6.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. 6.2. Սոցիալական գովազդին ներկայացվող չափորոշիչները ներկայացնում է ՀՀ կառավարությունը:	Չի ընդունվել:	Սոցիալական գովազդի հասկացությունը տրված է «Գովազդի մասին» օրենքում: ՀՀ կառավարությանը դրան վերաբերող լրացուցիչ չափորոշիչներ սահմանելու լիազորություն վերապահելը խնդրահարույց է՝ այդ չափորոշիչների բովանդակության և հստակության տեսանկյունից: Պարզ չէ, թե կառավարությունը ինչ լրացուցիչ պահանջներ կարող է սահմանել այդ չափորոշիչներով, որ չանցնի միայն օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների սահմանը:
Աժ պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Առաջին ընթերցմամբ ընդունված <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> և <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:	Ընդունվել է:	Նորմը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Հանրային հեռուստատեսությամբ ցուցադրվող սոցիալական գովազդի, ինչպես նաեւ մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին հիշատակումը չպետք է գերազանցի հաղորդման տևողության 2.5 տոկոսը:»

	1) <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> օրենքի նախագծի 1-ին հոդվածը <<90 վարկյանը>> բառերից հետո լրացնել հետևալ բառերով. <<, որը համաչափ բաժանվում է մեկ ժամվա մեջ հեռարձակվող հաղորդումների միջև>>: 2) <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածը <<ճանաչել ուժը կորցրած>> բառերի փոխարեն լրացնել հետկյալ բառերով. <<շարադրել հետկյալ խմբագրությամբ <<12. Արգելվում է ժամը 06:00-ից միևչև 24:00-ն Հանրային հեռուստատեսությամբ հովանավորության դեպքերում վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան, ծխախոտի, ալկոհոլային թունդ խմիչքների, գիշերային ակումբների գովազդումը>>:	Ընդունվել է:	<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է հետկյալ խմբագրությամբ. «12. Արգելվում է վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան, գիշերային ակումբի, ծխախոտի, ինչպես նաև սույն օրենքով հեռուսատեսությամբ գովազդի համար արգելված ապրանքների և ծառայությունների՝ որպես հովանավորներ հիշատակումը Հանրային հեռուստատեսությամբ:»:
ՀՀ կառավարություն	<<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով հետկյալ բովանդակությամբ. <<Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետում <<բնության պահպանության,>> բառերից հետո լրացնել <<մշակույթի,>> բառով:>>:	Ընդունվել է:	